


**ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԵՎ ՎՍՏԱՀՈՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽՈՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԳԱՂՏՆԱԼՍՈՒՄ**

20.01.2020 18:46



Հայաստանի Հանրապետության փաստաբանների
պալատի փաստաբանների իրավունքների
պաշտպանության հանձնաժողովը (համակարգող
Գևորգ Մկրտչյանի և անդամներ՝ Արմինե Ֆանյանի,
Արմեն Ֆերոյանի, Դիանա Շախրամանյանի, Էմին
Բեգլարյանի կազմով), ուսումնասիրելով փաստաբան
Էդգար Թումասյանի կողմից ներկայացված դիմումը՝
իր և իր վստահորդների հեռախոսային
խոսակցությունը գաղտնալսելու վերաբերյալ, պարզել
է, որ՝

Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական
վարչությունում Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի
հատկանիշներով քննվող թիվ 22100419 քրեական
գործով իրականացված հեռախոսային
խոսակցությունների վերահսկման ընթացքում
գաղտնալսվել են նաև մեղադրյալի,
դատավարության այլ մասնակցի և, նրանց
փաստաբան Էդգար Թումասյանի միջև տեղի ունեցած
հեռախոսային խոսակցությունները:

Այնուհետև, Շիրակի մարզային քննչական
վարչության ավագ քննիչ Արմեն Գյոզալյանի
(այսուհետ, նաև՝ Քննիչ) կողմից գնվել են այդ
խոսակցությունները, դրանք արտացոլվել
համապատասխան արձանագրության մեջ և կցվել
քրեական գործին:

Բացի այդ, քննիչի կողմից մերժվել է փաստաբանի
միջնորդությունը՝ փաստաբանական գաղտնիք
պարունակող այդ հեռախոսային խոսակցություններն
անհապաղ ոչնչացնելու վերաբերյալ,
պատճառաբանվելով, որ այդ հեռախոսային
խոսակցությունները քրեական գործով որևէ
ապացուցման ենթակա հանգամանքի հիմքում չեն
դրվել և չեն կարող դրվել, իսկ դրանք գործով էական
նշանակություն ունեցող տեղեկություններ չեն
պարունակում:

Հանձնաժողովը, վկայակոչելով միջազգային և
ներպետական իրավակարգավորումները, ինչպես
նաև ձևավորված միջազգային դատական
պրակտիկան,

**- ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, որ Հայաստանի
Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի
մարզային քննչական վարչությունում
Հայաստանի Հանրապետության քրեական
օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի**

**հատկանիշներով քննվող թիվ 22100419
քրեական գործով իրականացված
հեռախոսային խոսակցությունների
վերահսկման ընթացքում փաստաբան Էդգար
Թումասյանի և իր վստահորդների
հեռախոսային խոսակցությունների
գաղտնալսումը, ինչպես նաև հետագայում այն
ավագ քննիչ Արմեն Գյոզալյանի կողմից
զննելը, համապատասխան արձանագրության
մեջ արտացոլելը և քրեական գործին կցելը
խախտում է փաստաբանական գաղտնիքի
վերաբերյալ ներպետական և միջազգային
իրավակարգավորումները:**

**- ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է Հայաստանի
Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի
մարզային քննչական վարչության ավագ քննիչ
Արմեն Գյոզալյանի կողմից փաստաբանական
գաղտնիքը խախտող գործողությունները:**

**- ՀՈՐԴՈՐՈՒՄ Է իրավասու ՀՀ պետական
մարմիններին ու պաշտոնատար անձանց՝
փաստաբանի և, վերջինիս վստահորդի միջև
հեռախոսային կամ կապի այլ միջոցներով
տարվող խոսակցությունների լսման և
ծայնագրառման նյութերն անհապաղ
ոչնչացնել:**

Բեռնել՝ Հանձնաժողովի հայտարարությունը

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })